



## ՊԱՅՔԱՐԻ ԳՈՅԵՐԹՈՎ...

Փոթորկոտ ամառ մը արդեն իսկ կու գայ արձանագրելու իր աւարտը. Ետին ծգելով անհաւատալի կորուստը մեր շատ սիրելի մելգոնեանցի ընտանիքին. Մինչ մեր պաշտելի Հաստատութեան վերամուտի դօղանշները դժբախտաբար չինչեցին, եւ որուն այսքան կարիքը կը զգար մեր հայկական գաղութը, իսկ կիարացի ժողովուրդին բաղձանքն էր վերաբաց տեսնել յարգանք պարտադրող այս պանծալի Հաստատութիւնը:

Կաղամեռիկ յիշատակը մեր պայքարի ընկերներուն ընդմիշտ անմար պիտի մնայ մեր հոգիներուն մեջ: Արդ, Յակոր Թիւթիւննեան, Մելգոնեան Սանուց Միութեան կարկառուն անդամներն մին, մեր պայքարի ուղիին առաջնորդներն, յաճախ հանդիսացած էր այն ողջմիտ ծայնը, երբ անդին «բարեկամներ» լուր կը հետեւեին Սանուցի քայլերուն: Իր սիրեցեալ տիկինը՝ Յիլտան, ինքզինք պատուուած կը զգար որպես «Մելգոնեանցի Մայր», եւ իր ետին թողելով գաղութային եւ միութենական հարցերը, մեծ հաճոյքով իր տան դռները բացած էր բազմաթիւ մելգոնեանցի աղջիկներու եւ տղոց:

Արան, որ սկսած էր պատրանաթափ ըլլալ եւ հակառակ իր տասնվեցամեայ հասուն տարիքին, սկսած էր իրականութիւնը իր եւրեամբ զգալ ու ականատես ըլլալ: Ան չէր կրնար հաւատալ թէ ինչպէ՞ս, այս նոյն անձերը, որոնք իր մարզական եւ ընկերային կեանքի կոփումին նպաստած էին, ինչպէս կրնան իր սիրեցեալ դպրոցին փակման ալ նպաստել, պարզապես իրենց անձնական նիւթական շահերուն համար: Ան հեռացաւ այս աշխարհին, առանց հասկնալու թէ ինչո՞ւ համար ինք եւ իր ընկերները, նոյնիսկ իր կրտսեր եղբայր՝ Պարետը դատապարտուած էին օտար վարժարան յաճախել:

Դատարկութիւնը զոր ստեղծուեցաւ այս ընտանիքին ողբերգական եւ անարդար կորուստով, կարելի պիտի չըլլայ որեւէ այլ ծեւով ամոքել, սակայն անոնց ոգին յաւետ պիտի մնայ մեր կողքին, մեզի հետ ընդմիշտ պայքարելու յանուն գերագոյն նպատակին:

Այս տիսուր առիթով, Սանուց Միութիւնը կու գայ յայտնելու իր համախոհ բարեկամներուն թէ «դատական պայքարի Ֆոնտ»ի կողքին ստեղծեց նաեւ «Աշակերտական Ֆոնտ» մը, որմէ պիտի օգտուին նաեւ մելգոնեանցի կարիքաւոր աշակերտներ:

Այս ամառ մենք արձանագրեցինք նաեւ դժբախտ կորուստը մեր շատ սիրելի ու անկեղծ բարեկամ, մեր տասնամեայ պետական ներկայացուցիչ՝ Պրև. Պետրոս Գալայճեանին, որ ոչ միայն մեր գերագոյն պայքարին նախակարապետն էր, այլ իր ներկայութեամբ իսկ ընդմիշտ նեցուկ ու սատար հանդիսանալով, յատկապես պետական մակարդակի վրայ մեծապես նպաստեց Մելգոնեանի կալուածին պահպանման: Ան յաճախ բանալ տուաւ այսպիսի դռներ, երբ ուրիշներ ակամայ փակած էին: Պրև. Պետրոսը իր եւրեամբ ընդմիշտ պիտի արժանանայ իւրաքանչիւր մելգոնեանցիի անկեղծ յարգանքին ու կարօտին մեր Մեծ Ըստանիքին ու համայն հայութեան կողմէ:

## **Օրինական Պատերազմ**

Ամառնային արձակուրդի ընթացքին մենք ականատեսը դարձանք այս հզօր ճիգին որ ի գործ կը դնեին աշխարհացրիւ սանուց միութիւններն ու բարեկամները, օգնութեան ձեռք երկարելու համար, պատասխանատու կազմակերպութիւններուն վրայ ճնշում բանեցնելու համար, որովհետեւ քաջ գիտեին թէ այս վերամուտին իսկ, բազմաթիւ աշակերտներ պիտի գրկուեին իրենց ազգային իրաւունքներէն, ի մասնաւորի հայեցի դաստիարակութենեն:

Ինչպէս քաջատեղեակ եք արդեն, թէ Պոլսոյ Պատրիարք Գերաշնորհ Մեսրոպ Մութաֆեան, որ միակ կտակառուն ու ժառանգորդն է բարերար Կարապետ Մելգոննեանի կտակին, հետեւաբար օրինական գետնի վրայ կը գլխաւորէ նաեւ պայքարը ընդդեմ դպրոցի փակման: Յունիս ամսուան ընթացքին, աև յաջողեցաւ ձեռք ձգել Կիարական դատական ատեանի վճիռ մը, պահանջելով ՀԲԸ Միութենեն յետո կոչել իր կայացուցած որոշումը, ինչպէս նաեւ կալուածները ծախելու կամ վարձելու առնչութեամբ, դպրոցի շարունակականութիւնը ապահովելու եւ Ներկայացնելու նիւթաբարոյական տեղեկագիր Յաստատութեան կալուածներուն առընթեր:

7 Յունիսին, Սանուցի պատասխանատու անդամներ «դատական վճիռ»ը գրաւոր կերպով ներկայացուցին Կորտըն Անտըրսընին, Մելգոննեանի կարգ մը պաշտօնեաներուն ինչպէս նաեւ ՀԲԸ-ի գործակալներ՝ Յրաչ Սանուկեանի եւ Գարեգին Կոստանեանի, որպէսզի անոնք ալ իրենց կարգին անմիջապէս գործադրութեան անցնեն «դատական վճիռ»ը: Սեպտեմբեր 20, Կորտըն Անտէրսըն պիտի ներկայանայ դատարան բացատրութիւն տալու թէ ինչ պատճառաբանութեամբ ցարդ չկիրարկեց «դատական վճիռ»ը:

Մինչ այդ, ՀԲԸ-ը վարձեց այլ փաստաբան մը եւս, որ «թէքնիք» պատճառներով յաջողեցաւ «դատական վճիռ»ը յետո կոչել, ճարպիկութիւն մը գործադրելով եւ դատական օրերու փոփոխութիւն մը կատարելով. 25 Օգոստոսը բերելով 19-ի, առանց մեր փաստաբաններուն կարծիքը առնելու կամ տեղեակ պահելու (ինչ որ դատական օրենքը կը պահանջէ), ինչպէս նաեւ իրենց բացակայութենեն օգտուելով: ՀԲԸ-ի յաղթական ըլլալու ցանկութիւնը սակայն շատ կարճ ժամանակամիջոց մըն էր միայն. մեր փաստաբանները անմիջապէս կրցան յաղթահարել այդ «թէքնիք» խաղը, վերահաստատեցին «դատական վճիռ»ը եւ որպէս դատական առաջին լսողական օր, 29 Սեպտեմբերը նկատուեցաւ ի գօրու:

Այս իրողութիւնը, որ մենք չկարողացանք այս վերամուտին բանալ Յաստատութեան դարպասները, մեր ալ գլխաւոր յուսախաբութիւնն է, սակայն մենք տակաւին կը մնանք անյօդողդ մեր որոշումներուն. եւ մեր աննկուն կամքին շնորհիւ, մենք կը հաւատանք, թէ անպայմանօրէն յաղթանակը մերն է. վասնզի մեր պայքարի գոյերթով է որ միայն կրնանք ապահովել ներկայ եւ յաջորդող սերունդներուն համար հայեցի փայլուն ապագայ:

**Մելգոննեան Սանուց Միութեան**

**Ատենապետ՝  
Շաւասպ Պոհճալեան**

**Փոխ Ատենապետ՝  
Մասիս Տէր Բարթող**

**9 Սեպտեմբեր, 2005**